

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱԴԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ 140-ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

Վանգուվըրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յայց. Առաքելական եկեղեցւոյ Յոգեւոր Յովի Տ. Յուսիկ Վրդ. Մարտիրոսեանի եւ Յոգաբարձութեան կազմակերպութեամբ, Ուրբաթ, Փետրուար 5, 2010-ի երեկոյեան, տեղի ունեցաւ գեղարուեստական հանդիսութիւն մը նուիրուած Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140-ամեակին, նախագահութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանի եւ հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Ճորճ Աղազարեաններու:

Ձեռնարկի պաշտօնական բացումը կատարեց հոգաբարձութեան ատենապետ պրն. Էտի Փափագեան, որ ողջունեց Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանը, որ Վանգուվըր կը գտնուէր յատկապէս այս առիթով եւ Ազգային Վարչութեան անդամ Տկ. Օսիկ Մխսիարթեանը: Յիւրերու շարքին էին հոգեւոր պետեր, որոնք կը ներկայացնէին զանազան յարանուանութիւններ եւ համայնքներ, ինչպէս նաեւ Ողիմպիական 2010 մարզախաղերու Յայաստանի Ազգային խումբի փոխ-նախագահ պրն. Դերենիկ Գաբրիէլեան:

Հանդիսութիւնը սկսաւ Կոմիտաս Վարդապետի ՏԼԷ Եաման եւ Ախ Մարալ ճան երգերով, որոնք մենակատարեց Թամար Սիմոն Գրիգորեանը, դաշնակի վրայ ընկերակցութեամբ Գարմէն Ֆասթի:

Կոմիտասի կեանքն ու գործերը ներկայացուց ԲԺ. Արմանտ Այալթինը, որմէ ետք հանդիսատեսները ունկնդրեցին Կոմիտաս Վարդապետի ձայնը՝ արձանագրուած 1912-1913 թուականին, Փարիզի մէջ:

Արամ Գարագաշ ջութակի մենակատարութեամբ եւ դաշնակի վրայ ընկերակցութեամբ Պրէյտըն Լիմի, ներկայացուցին Կռունկը, իսկ Թամարն ու Գարմէնը դարձեալ բեմ բարձրացան ներկայացնելու համար՝ Անտունին:

Ձեռնարկի երկրորդ բաժնով, Phoenix Chamber Choir-ը ղեկավարութեամբ Ռամոնա Լուէնկընի, ներկայացուցին փունջ մը ստեղծագործութիւններ, ինչպէս՝ Յով արեգ սարեր ճան, Տէր կեցո դու գհայս, Երկնից գետնից, Առնեմ երթամ իմ եարը, եւայլն...: Օտարազգի այս երգչախումբը հայօրէն ներկայացուց Կոմիտաս Վարդապետի ստեղծագործութիւնները, որուն համար Կոմիտաս ինքն իսկ հպարտութեամբ պիտի գովերգեր անոնց տաղանդն ու դղրացուցիչ ձայնը:

Երեկոն փակեց Թեմիս բարեջան Առաջնորդը որ իր խօսքին մէջ գնահատելով մենակատարներն ու երգչախումբը ըսաւ. «Յայաստանի մէջ եւ ի սփիւռս աշխարհի հողմացրիւ հայութիւնը այլազան միջոցներով անգամ մը եւս իր երախտագետ սիրտը կը խոնարհեցնէ Կոմիտասի անկրկնելի հանճարին առջեւ»:

PHOTO:

- 1- Էտի փափագեան - ատենապետ
- 2- Արմանտ Այալթին
- 7- Թամար

8- Արամ
17- ղեկավար
22 - Աղազարեաններ